

**ՍԱՌՄԱՆԱԴՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐԵԼԻՆԵՐԸ՝
ԻՐԱՎՈՒՆՔԻ ԳԵՐԱՎԱՅՈՒԹՅՈՒՆ,
ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՅՈՒՄ**

Գ.Գ. Նարությոնյան - իրավագիրության դոկտոր,
պրոֆեսոր

Սահմանադրականության հիմնախնդիրը՝ իշխանության սահմանափակման եւ իրավունքի գերակայության հասպարման փեսանկյունից, վերջին հարյուրամյակների ընթացքում եղել ու մնում է հանրային կառավարման ամենահրապար հիմնախնդիրը։ ԱՄՆ Սահմանադրության հայրերն այս խնդրի լուծումը փեսան առաջին հերթին իշխանությունների բաժանման ու հակակշռման ճանապարհով։ Ինչպես պնդում էր Ջեյմս Մելիսոնը, փառամոլությանը պեսը է հակադրել փառամոլություն՝ այն զապելու համար։ Նա գրնում էր, որ հակադիր եւ մրցակցային շահերի սահմանադրորեն հավասարակշռումը կարող է զապել իշխանությանը եւ երաշխավորել ազարությունը¹։ Իսկ Նակոր եւ Շահամիր Շահամիրյանները դեռևս 1773 թվականին ապագա անկախ Հայաստանի համար գրվող սահմանադրությունը պարզապես անվանեցին «Որոգայթ փառաց»՝ անվան մեջ ամփոփելով սահմանադրական կարգավորումների ողջ իմաստն ու դրամաբանությունը։

Հարկապես XX դարի սահմանադրական զարգացումները համակարգային ամբողջականություն հաղորդեցին ազարական-իրավական արժեքանության հենքի վրա կառուցված սահմանադրական զարգացումներին։ Դրանք իրենց դասական կարգարելությանը հասան Գերմանիայի Դաշնության Տիմնական օրենքում՝ առաջին իսկ հոդվածում ամրագրելով, որ մարդու իրավունքները ոչ միայն բարձրագույն արժեք են ու անօփարելի իրավունքներ, այլև գործում են անմիջականորեն։

Նախորդ հազարամյակն իր հետք բերեց շրջադարձային բազում լուծումներ, համակարգային աննախադեպ հակամարդություններ ու փլուզումներ, որոնք դասնյակ երկրների համար սահմանադրական նոր լուծումների անհրաժեշտություն թելադրեցին։ Դրա վերջին երկու մեծ ալիքները ծավալվեցին Երկրորդ համաշխարհային պատերազմից եւ ապա՝ ԽՍԴԻ փլուզումից հետո։ Երկու դեպքում էլ զարգացումները գնացին պարմականորեն քննություն բռնած եւ այլընդունակ չունեցող արժեհամակարգային միեւնույն ուղիով՝ սահմանադրական ժողովրդավարություն հասպարելու անհրաժեշտության ճա-

¹ Стю Рассел Г. Конституционализм: опыт Америки и других стран – <http://www.infousa.ru/government/dmpaper2.htm> (09.03.2009).

նապարհով: Դա առավել հեշտ դրվեց սահմանադրական տեքստային լուծումների մակարդակում: Սակայն շարունակում է հսկայական մնալ այդ լուծումների ու իրական կյանքի անջրպեսը: Այդ խզումն է ներկայումս դարձել հիմնական պարզառը հասարակական բացասական էներգիայի հսկայական կուտակումների ու սոցիալական պայյեյունների, ինչպիսիք համընդգրկուն ձեռով դրսեւրվեցին արարական աշխարհում: **Սա արդեն սահմանադրականության բացակայությամբ պայմանավորված խորքային պորթեկում է,** որը թելադրում է համակարգային կայունության նոր երաշխիքների արմադրավորման անհրաժեշտությունը:

Սահմանադրության առկայությունն ինքնին որեւէ խնդիր չի լուծում: Էականը համարժեք սահմանադրական կարգի առկայությունն է: Սահմանադրությունը կյանքի կոչելը, սահմանադրական նորմատիվ բնույթի արժեքներն իրական կյանքի կանոն դարձնելը միայն հնարավորություն կփառ երաշխավորել իրավունքի գերակայությունն ու համակարգային կայունությունը: Գերիսնդիրը եղել ու շարունակում է մնալ հանրային կյանքի իրողությունները սահմանադրական լուծումներին ներդաշնակելը:

«Սահմանադրականություն» հասկացությունը մասնագիտական գրականության մեջ դասվում է այն հասկացությունների շարքին, որոնց վերաբերյալ բազմաթիվ, ու հաճախ նաև՝ իրարամերժ բանաձեւումներ կան: Սակայն մինչեւ դրանց բնույթին ու առանձնահավկություններին անդրադառնալն անհրաժեշտ ենք համարություն հրավիրել հասկացության ծագումնաբանական արմագներին: Առաջին անգամ այդ հասկացությունը կյանքի է կոչվել ամերիկյան Սահմանադրության Հայրերի կողմից, ովքեր սահմանադրականությունը դիմում էին որպես երկրի Տիմնական օրենքի գերակայության բնութագրիչ՝ այլ օրենքների ու իրավական ակտերի նկարմամբ: Գ. Բերմանն այն կարծիքին է, որ «սահմանադրականություն» հասկացությունը գիտական շրջանառության մեջ է դրվել XVIII դարի վերջերին և XIX դարի սկզբներին՝ գիտավորապես շեշտելու համար օրենքների նկարմամբ Սահմանադրության գերակայության ամերիկյան դոկտրինան: Սահմանադրականությունը Սահմանադրության գոյության վկայությունն էր, դրա դերի ու կարեւորության ընդգծումը:

Սակայն, ինչպես նշում է նույն հեղինակը, այդ ֆենոմենի իրողությունն այլ իրավագենքների կարծիքով ավելի հին արմագներ ունի եւ առնչվում է Արևմտյան Եվրոպայի IX-XII դարերի քաղաքային իրավական համակարգերին²:

Մեր կարծիքով, սահմանադրականությունն արժեքանական բնույթ ունի եւ ամենից առաջ կապված է սահմանադրական մշակույթի իրողության հետ: Սահմանադրականությունը ոչ այնքան գրավոր Սահմանադրության վկայությունն է, որքան

² Берман Г., Западная традиция права: эпоха формирования. - М., 1998.- С. 370.

սահմանադրական մշակույթի դրսետրման բնութագրիցը, սահմանադրական կարգի, դրա էական բաղադրաբարբերի իմաստավորված գոյությունն իրական կյանքում:

«Սահմանադրականություն» հասկացությունը ներկայումս կապվում է մի շարք իրավական երեսույթների հետ, ինչպիսիք են.

- սկզբունքների, գործունեության կարգի եւ կառուցակարգային մեխանիզմների ընդհանրությունը, որոնք ավանդաբար օգտագործվում են պետական իշխանության սահմանափակման նպատակով³,

- սահմանադրական միջոցները՝ պետական իշխանության սահմանափակումներ սահմանելու համար⁴,

- համապետական, վերկուսակցական, միաբանող գաղափարախոսությունը⁵,

- իրավաքաղաքական ռեժիմը, որի դերը հասարակության ներսում արդարության ու ներդաշնակության երաշխավորումն է⁶,

- կառավարման սահմանադրական կարգի առկայությունը, պետական կառավարումը՝ սահմանափակված Սահմանադրությամբ⁷,

- իշխանության ինքնասահմանափակումը⁸,

- իրավունքի փիրապետությունը հասարակական-քաղաքական կյանքի բոլոր ոլորդներում, որը ենթադրում է մարդու իրավունքների առաջնահերթություն եւ երաշխավորում է անհարի ու պետության փոխադարձ պարասխանափակությունը⁹,

- Սահմանադրությանը համապատասխան պետական եւ հանրային կյանքի կազմակերպման գեսությունն ու պրակտիկան կամ Սահմանադրության վրա հիմնված քաղաքական համակարգը¹⁰,

- իրավունքի գերիշխանության սկզբունքը, որը ենթադրում է երկրի իշխանությունների ու պետական մարմինների իշխանական լիազորությունների սահմանափակում¹¹,

- Սահմանադրության (գրված կամ չգրված) առկայությունը եւ դրա ակդիվ ներագեցությունը երկրի քաղաքական կյանքի վրա, ...պետական համակարգի, քաղա-

³ Шайо А. Самоограничение власти (краткий курс конституционализма). - М., 1999.

⁴ Barendt E. Introduction to Constitutional Law. - Oxford Univ. Press, 1998.- P. 14.

⁵ Нерсесянц В. С. Конституционализм как общегосударственная идеология // Конституционно-правовая реформа в Российской Федерации. Сб. ст. / Отв. ред. Ю. С. Пивоваров. М., 2000. С. 6-8.

⁶ Сонина Л. В. Конституционализм в Российской Федерации как политico-правовой режим: автореф. дисс. ... канд. юрид. наук. Екатеринбург, 2001. С. 7-8.

⁷ Пуздрач Ю. В. История российского конституционализма IX-XX веков. СПб., 2004. С. 7.

⁸ Шайо А. Транснациональные сети и конституционализм // Сравнительное конституционное обозрение. 2008. N 5 (66). С. 123.

⁹ Ромашов Р.А. Современный конституционализм: теоретико-правовой анализ.

<http://www.lawlibrary.ru/disser2000401.html> (09.03.2009).

¹⁰ <http://dic.academic.ru/dic.nsf/enc-law/1027/>.

¹¹ Рассел Г. Конституционализм: опыт Америки и других стран – <http://www.infousa.ru/government/dmpaper2.htm> (09.03.2009).

քական ռեժիմի, անհափի իրավունքների ու ազադությունների ճանաչման և քաղաքացի-պետություն փոխհարաբերությունների սահմանադրական կանոնակարգվածությունը, դրա իրավական բնույթը¹²:

Բանաձեռումներն այսքանով չեն սպառվում, սակայն բերված օրինակները բավարար են երեւոյթի փարբեր ընկալումները հիմնական գծերով ներկայացնելու համար:

Իրավագեղներից շափերն են կարծում, որ «սահմանադրականություն» հասկացությունը բազմաշերտ ու բազմամիավ է, եւ այն որեւէ կոնկրետ հավկանիշով բնութագրելն անհնարին է: Դա իրոք այդպես է: Միաժամանակ, մասնագեղներին պայմանականորեն կարելի է դասել երկու խոշոր խմբերի:

1. ովքեր սահմանադրականություն երեւոյթը կապում են բուն Սահմանադրության գոյության փասփի եւ դրա միջոցով իրավակարգավորման հետ,

2. ովքեր սահմանադրականությունը դիմարկում են արժեքանական գեսանկյունից՝ որպես հասարակական համակեցության որոշակի մշակույթի դրսեւորում:

Մենք գրնում ենք, որ առաջին մոդեցումը բխում է երկրորդից եւ ածանցյալ նշանակություն ունի: Միանգամայն համամիտ ենք Վ. Ներսեսյանցի՝ վերը հիշապակված այն մրգի հետ, որ սահմանադրականությունը համապետական գաղափարախոսություն է, և գրնում ենք, որ այն պետական համակեցության մշակույթ է, ձեւավորվում է հազարամյակների ու դարերի ընթացքում, ունի խոր սոցիալական արմագներ եւ առաջին հերթին պետք է դիմարկել որպես սահմանադրական մշակույթի դրսեւորման ձեւ, որը կարող է փարբեր լինել ոչ միայն փարբեր երկրներում, այլև զարգացման փարբեր փուլերում: Ուստի կփորձենք ուսումնասիրությունը խորացնել հենց այս ուղղությամբ:

Նոր հազարամյակում մարդկային հանրությանը ներված մարդարավերների շարքում առանձնապես կարեւորվում են համակարգային կայունության երաշխավորումը եւ սոցիալական կարավիզմների բացառումը, որոնք կարող են աննախադեպ կործանարար հեգեւանքներ ունենալ: Այսօր մենք ականափեսն ենք դրա նոր ալիքի՝ բռնկված արաբական աշխարհում: Այս երեւոյթն անմիջականորեն առնչվում է սահմանադրականության հիմնախնդրին, իրական ու ձեւական արժեհամակարգային մոդեցումների բախումներին: Սահմանադրագիրության կողմից ներկայումս առանձնահարուկ ուշադրության է արժանանում այնպիսի հասկացությունների վերիմասպավորումը, ինչպիսիք են «սահմանադրական կոնֆլիկտաբանությունը» (Սահմանադրությունը որպես փարաբնույթ հակասությունների ու հակադրությունների հաղթահարման միջոց ու հնարավորություն դիմարկելը), «սահմանադրական ախտաբանությունը» (հասարակական հարաբերությունների իրական բնույթի գնահատումը սահմանադրական արժեքների գեսանկյունից - սահմանադրականության իրական պարկերի բացահայփումը), սահմա-

¹² См.: Кутафин О.Е., Российский конституционализм. М., 2008. С. 47.

նադրական ռացիոնալիզմը՝ բուն Սահմանադրությունն իրական կյանքից բխեցնելը, սահմանադրական ռումանիզմի հաղթահարումը եւ այլն:

Մասնագիրական գրականության մեջ իրավացիորեն շեշտվում է, որ Սահմանադրության գոյության փաստը դեռևս բավարար չէ սահմանադրական մշակույթի մասին խոսելու համար: Անիրաժեշտ է սահմանադրական մշակույթի գոյության փաստը գնահապել Սահմանադրության, դրա նորմերի ու սկզբունքների հանդեպ հասարակության անդամների ունեցած վերաբերմունքից, **դրանցով ապրելու նրանց պատրաստակամությունից ու իրական հնարավորությունից ելնելով**¹³: Սահմանադրությունը ոչ այլ ինչ է, քան իրականության համակարգված իրավական նկարագրումը: Իրականություն, որը քարացած չէ, ապրում եւ շնչում է իր օրինաչափություններով:

ԱՄՆ Սահմանադրության 200-ամյակի կապակցությամբ իրավարակած իր ուսումնասիրության մեջ Դ. Լեիխն առանձնապես կարեւորում է այն հանգամանքը, որ Սահմանադրությունը՝ դա գերազ չէ, այն արժեքային համակարգ է, արժեքներ, որոնք ապրում են, վերաբաղրվում, ուղղորդում հասարակական կյանքը¹⁴: Իսկ Ռոջեր Գոլդմանը գիտում է, որ ամերիկյան սահմանադրական մշակույթն ունի երեք հիմնական առանձնահավելություն.

- իրավունքների շեշտադրումը՝ ի հաշիվ պարփականությունների,
- դադարական իշխանության կենդրոնական դերը մարդու իրավունքների պաշտպանության հարցում,
- ամերիկյան Սահմանադրության ընկալումը որպես «կենդանի փաստաթղթի», զարգացող իրողության¹⁵:

Իր հերթին, ալրոֆեսոր Չ. Սանդերսը՝ համադրելով բրիգանական եւ ամերիկյան սահմանադրական մշակույթի առանձնահարուկ գծերը, շեշտում է, որ բրիգանական սահմանադրական ավանդույթը ոչ թե հեղափոխական, այլ էվոլյուցիոն ավանդույթ է՝ **խարսխված ասդիճանական, պատմականորեն ձեռավորված սահմանադրական արժեքային համակարգի վրա**¹⁶:

Սահմանադրական կառավարման համակարգերի արժեքանական ակունքների ուսումնասիրման շրջանակներում չին հեղինակներ Յան Սինյույը եւ Վան Բոսինն ընդգծում են, որ «Ամերիկյան Սահմանադրության ամենացայդուն բնութագրիչներից մեկը դրա «գերկայունությունն» է: Այդ կայունության պարճառը ոչ միայն բուն գերսպի

¹³ <http://www.claremont.org/writings/000901west.html>.

¹⁴ **REPRESENTING POPULAR SOVEREIGNTY: THE CONSTITUTION IN AMERICAN POLITICAL CULTURE** by Daniel Lessard Levin. Albany: State University of New York Press, 1999.
<http://www.bsos.umd.edu/gvpt/lpbr/subpages/reviews/levin99.html>.

¹⁵ Roger Goldman - The Protection of Individual Rights as the Fundamental Element of the United States Constitutional Culture // Constitutional Cultures. Ed. by M. Myrzykowski. Warsaw, ISP, 2000, էջ 25:

¹⁶ Saunders Ch. A. Constitutional Culture in Tradition // Constitutional Cultures. Ed. by M. Wyrzykowski. Warsaw, ISP, 2000. P. 41:

մեջ է, այլեւ նրանում, որ այդ Սահմանադրությունը հենվում է քրիստոնեական քաղաքակրթության հիմքի վրա»:¹⁷

Արեւմուգբում արդեն իսկ արմադրավորված գեսակեպ է, որ սահմանադրականության եւ քրիստոնեական քաղաքակրթության միջեւ գոյություն ունի պագճառական փոխապվածություն: Վյդ փոխապվածությունը դրսեւորվում է սահմանադրականության զարգացման պարմականորեն իրար հաջորդող երեք հիմնական փուլերում՝ անդիկ շրջան, միջնադար եւ XVIII-XXI դարեր:

Դիշյալ հեղինակների կարծիքով, քրիստոնեական ավանդույթներն արեւմբյան սահմանադրական ավանդույթների հիմք են հանդիսացել առնվազն երեք ոլորտներում.

Նախ՝ քրիստոնեության եւ հոգեւոր իշխանության ծաղկման սկզբնական շրջանում եկեղեցու օրենքները սահմանափակեցին միապետների իշխանությունը եւ սկիզբ դրեցին իշխանությունների որոշակի փարանջապման,

Երկրորդ՝ հարգանքն Ասպծու նկարմամբ հարգանք առաջացրեց նաեւ նրա կամքի արդահայպություն հանդիսացող օրենքների հանդեպ,

Երրորդ՝ կրոնը մարդկանց առաջադրում է վարքագծի նորմեր եւ հասպարում է այն իրողությունը, որ սահմանադրական կառավարման պայմաններում ազարությունները կարող են որոշակիորեն սահմանափակվել:

Այս բոլորը սահմանադրական կառավարման արժեքանական որոշակի հիմքեր սպեղծեցին¹⁸:

Իրավական արժեքանության (աքսիոլոգիայի) գեսանկյունից¹⁹ սահմանադրական մշակույթի ի հայր գալը պայմանավորված է նրանով, թե որքանով են «սահմանադիր» հարաբերություններն իրավականորեն արժեքորվում, դառնում վարքագծի համընդունելի կանոն, անկախ նրանից՝ սովորութային դրսեւորում ունեն, թե՛ հանդես են գալիս որպես համապարփառիր վարքագծի սահմանված կանոն: Գրականության մեջ հաճախ բուն սահմանադրությունը մշակութային երեւույթ է համարվում միայն այն դեպքում, եթե այն կյանքի է կոչվում, գործող, ապրող իրողություն է, ընկալված է ու ճանաչված, այլ ոչ թե հաճելի ձեւակերպումների ու խելոք մոքերի ժողովածու է²⁰: Վերջինս ավելի վրանգավոր է դառնում, եթե իշխանության մարմինների համար դառնում է ծխածածկույթի միջոց:

¹⁷ Ян Синьоий, Ван Босинъ, Общее познание верховенства права и конституционного правления: Цивилизационный подход // Сравнительное конституционное обозрение, 2007, N 1(58), с. 8. Վյդ մասին մանրամասն գլեւն նաև՝ Պապայան Ռ., Արդի իրավունքի քրիստոնեական ակոնքները /զիր. խմբ.՝ Գ.Գ. Նարությունյան, Մ.Ա.Ս. Էջմիածին, 2002:

¹⁸ Նոյն գեղում, էջեր 8-9:

¹⁹ Տես Политико-правовые ценности: история и современность /Под ред. В.С. Нерсесянца. М., 2000, էջեր 5-30:

²⁰ Տես Book Review – Höberle and the World of the Constitutional State, <http://www.germanlawjournal.com/print.php?id=227>.

Սահմանադրական մշակույթը, այդուհանդերձ, առավել ամբողջական դրսեւոր-վում է քաղաքակրթության որոշակի ասպիճանում, երբ գիտակցված պահանջ է առաջանում հասարակական համաձայնությամբ սահմանել վարքագծի հիմնական սկզբունքներ ու կանոններ՝ որպես համապարփադիր իրավական նորմեր, ու հետևել դրանց: Իրավական առումով այդ պահանջը հանգեցրեց սահմանադրությունների ի հայր գալուն ու հանրային կյանքը սահմանադրորեն կանոնակարգելուն: Սակայն Սահմանադրության լոկ գոյությունը, ինչպես նշեցինք, բավարար չէ երկիրը կամ պետքությունը սահմանադրական համարելու համար: **Անհրաժեշտ է նաև, որպեսզի սահմանադրական նորմերը կյանքի կոչվեն, դրանց նկարմամբ դրսեւորվի հասարակական կայուն վերաբերմունք՝ ձեւավորելով հասարակության սահմանադրական մշակույթի իրական որակներ, այն դարձնելով ազգային մշակույթի օրգանական բաղադրաբարը:** Տակառակ պարագայում Սահմանադրությունը կկորցնի համակարգային կայունության երաշխավորի իր դերը:

Սահմանադրական մշակույթը նոր որակ է սպանում հասարակական-պետքական այն համակարգերում, ուր Սահմանադրության հետ մեկտեղ առկա է սահմանադրականությունը, որպես Սահմանադրությունը ոչ թե գործիք է պետքական իշխանության ձեռքին, այլ քաղաքացիական հասարակության հիմնական օրենք է, միջոց է այդ հասարակության ներդաշնակ ու կայուն զարգացումը երաշխավորելու համար՝ ոչ միայն սահմանելով վարքագծի հիմնական կանոնները, այլև սահման դնելով իշխանությանը, այն սահմանափակելով իրավունքով: Նման պարագայում խոսքը «**Ժողովրդավարական սահմանադրական մշակույթ»** հասկացության մասին է, որը բնորոշ է ժողովրդավարական հասարակական համակարգերին, ուր ներդաշնակված են նաև ազգային ու համամարդկային մշակույթի որակները:

Անփոփելով՝ կարող ենք ընդհանրացնել, որ իրավական պետքությունում «սահմանադրական մշակույթ» հասկացությունը մեր կողմից բանաձեւվում է որպես **պարունականութեան ձեւավորված, կայուն, սերունդների ու ողջ մարդկության փորձառությամբ հարսփացած համոզունքների, պարկերացումների, իրավընկալման, իրավագիրակցության՝ հանրային ճանաչողության առանցքը կազմող արժեքային որոշակի համակարգ, որը հիմք է հանդիսանում սոցիալական հանրության համար հասարակական համաձայնությամբ սահմանելու եւ երաշխավորելու իր ժողովրդավարական ու իրավական վարքագծի հիմնարար կանոնները:**

Տվյալ բանաձեւման շրջանակներում «սահմանադրականությունը» հասարակական համաձայնությամբ սահմանված ժողովրդավարական ու իրավական վարքագծի հիմնարար կանոնների առկայությունը, դրանց՝ որպես ապրող իրողության, գոյու-

թյունն է հանրային կյանքում, յուրաքանչյուր անհատի քաղաքացիական վարքագծում, պերախշանական լիազորությունների իրականացման գործընթացում:

Առավել ընդհանուր՝ «սահմանադրականությունը» սահմանադրական արժեքների համակարգային ու իմաստավորված առկայությունն է հանրային կյանքում: Խնդիրը հանգում է ոչ թե Սահմանադրության պարզապես կիրառմանը, այլ այն սոցիալական համակարգի ձեւավորմանը, որում սահմանադրական արժեքանությունն իրացվում է այդ համակարգի յուրաքանչյուր բջջի կողմից՝ որպես դրա գոյության կենսապայման: **Սա է կայուն զարգացման ու հասարակական համերաշխության միակ ու դարերի քննությունը բռնած երաշխիքը:**

Տեղին է հիշել Շեքելի դափողություններն իրավունքի բովանդակության առնչությամբ, երբ շեշտում էր, որ հասկացությունը եւ իրական հարաբերություններում դրա գոյությունը երկու փարբեր բաներ են՝ ինչպես հոգին եւ մարմինը, որոնք միմյանցից բաժան լինել չեն կարող²¹: Ավելին՝ սահմանադրական ընկազումների ու հասարակական իրողությունների միջև որոշակի ներդաշնակություն պետք է լինի: Ներդաշնակություն ցանկալիի ու իրականի միջեւ, հանրային ճանաչում գրած ու վարքագծի հիմնարար կանոն դարձած արժեքի ու իրական վարքագծի միջեւ:

Ժողովրդավարական հասարակությունում սահմանադրականության հիմնական նախադրյալներն են. իշխանությունների ընդունությունը, դրանց գործառնությունը ու իրականացմանը, իրավունքի գերակայությունը: Իսկ Սահմանադրությունից դեպի սահմանադրականություն գանող ճանապարհն անցնում է Սահմանադրության նկարմամբ հանրային վերաբերմունքի, Շիմնական օրենքի լեգիփիմության միջով:

Սահմանադրականության հիմնական բաղկացուցիչներն են.

- ժողովրդի համաձայնությունը,
- իրավունքով սահմանափակված իշխանությունը,
- բաց հասարակությունը,
- անձի անձեռնմխելիությունը,
- իրավական նորմերի առկայությունը,
- իշխանությունների գործառնությունը:

Սահմանադրականության **երկու փարբերը՝ ժողովրդավարությունն ու իրավունքի գերակայությունը**, չեն կարող միմյանցից գործառնությունների մերժողական վերաբերմունք է դրսենում հանրային իշխանության ժողովրդավարական հիմքի առնչությամբ և չի նախադասում պերական իշխանության սահմա-

²¹ Գեգել Գ. Փիլոսոփիա права: Пер. с нем., М., 1990, էջ 59:

նափակման հնարավորություն, չի համապատասխանում ժամանակակից Սահմանադրության չափանիշներին: Զարգացման դեսանկյունից սահմանադրականության առնչությամբ սպասումներն ամբողջությամբ կարող են իրականանալ միայն երկու դարձերը համադրող սահմանադրությունների առկայության պայմաններում²²:

Սահմանադրականացումը պետքական իշխանության բարեփոխումները պայմանավորող հիմնական փոփոխությունների՝ մասնավորեցման, շուկայական դրվեսության, պայմանագրային հարաբերությունների անցման, անքակփելի մասն է, որոնց նպագակն է պետքական իշխանությունը դարձնել առավել սահմանափակված իր ազդեցության շրջանակների դրամականացմանը, առավել կենքրոնացած դեպի իր նպագակները, առավել պարասխանապու իր մասնակիցների նկարմամբ և առավել հաշվեքու իր քաղաքացիներին: Սահմանադրականացումը պետք է երաշխավորի, որպեսզի հանրային իշխանությունը, իր ցանկացած դրսեւորմամբ, իրականացվի ռացիոնալության, համամասնականության չափանիշների հիման վրա և այնպիսի միջոցներով, որոնք նախագետում են նվազագույն սահմանափակող միջամբություն մարդու հիմնական իրավունքների իրականացմանը²³:

Սահմանադրականությունը, լինելով սահմանադրական մշակույթի արդահայքման ձեւ, սոցիալական հանրության արժեհամակարգային ճանաչողության որոշակի քաղաքակրթական մակարդակի արդահայքություն, պայմանավորված է մի շարք գործոններով.

1. հասարակության զարգացման միբումներով եւ մարդու սոցիալական արժեվորման ասդիճանով,
2. մարդ-հասարակություն փոխհարաբերությունների բնույթով,
3. սոցիալական հանրության արժեհամակարգային առաջնահերթություններով,
4. արդադրական հարաբերությունների զարգացման մակարդակով,
5. մարդու սոցիալական պաշտպանվածության ասդիճանով,
6. հասարակական երեւույթների ու օրենքների իրավափիլիստիկայական ճանաչողության ու ընկալման մակարդակով,
7. հասարակության քաղաքական մշակույթի ու իրավագիրակցության ասդիճանով,
8. հասարակական համաձայնության կայացման սոցիալ-քաղաքական նախադրյալների առկայությամբ,
9. պետքական իշխանության գաղափարաբանական կողմնորոշումով եւ հասարակության ճակարտագրի համար պարասխանարվության գիրակցման ասդիճանով,

²² “The Twilight of Constitutionalism?”, edited by Petra Dobner and Martin Loughlin, 2010, Oxford University Press, p. 10.

²³ Նոյն գեղում՝ էջ 62.

10. համընդիանուր արժեքների ներազդեցության բնույթով եւ ազգային ինքնության որակների հետ դրանց ներդաշնակման ասդիմանով ու հնարավորությամբ,
11. սահմանադրական արժեքանության ձեւավորման մակարդակով,
12. սահմանադրական լուծումների բնույթով, դրանց համակարգվածության ասդիմանով,
13. սահմանադրական զարգացումների փրամաքանությամբ,
14. հասարակական հարաբերությունների սահմանադրականացման ասդիմանով ու որակով,
15. համակարգային կայունության էկոնոմիկ (արդածին) եւ էնդոքտին (ներծին) գործոնների ազդեցության բնույթով եւ այն:

Սահմանադրական մշակույթի դրսեւորման կարեւոր բնութագրիչներից է սահմանադրական իրավագիրակցությունը: Վերջինս ամենաընդիանուր գծերով ենթադրում է հասարակական հարաբերություններում սահմանադիր նորմերի անհրաժեշտության գիրակցում, դրանց սահմանում, այդ նորմերով ապրելու ու գործելու, դրանք հարգելու ու պաշտպանելու պարասարակամություն: Սահմանադրական իրավագիրակցության սուրյեկտ են հասարակության բոլոր անդամները, նրանց փարաբնույթ կազմավորումներն ու ինսպիրութները, **այդ թվում պետությունը՝ ի դեմս պետական իշխանության ինսպիրութների:** Տասարակության անդամների ու պետական ինսպիրութների սահմանադրական իրավագիրակցության միջև եղած աններդաշնակությունը **հանգեցնում է սոցիալական անհամաձայնությունների ու պայթունային հանգուցալուծումների:**

Քաղաքացիական հասարակության իշխանական բնութագրիչներից մեկն էլ այն է, որ պետությունն առաջնորդվում է հասարակության սահմանադրական իրավագիրակցությամբ, որի հիմքն իրավունքի գերակայության երաշխավորումն է եւ իրավունքով իշխանության սահմանափակումը:

Պետական իշխանության կարեւորագույն առաքելություններից է սահմանադրահրավական հարաբերությունների յուրաքանչյուր սուրյեկտի մով սահմանադրական այնպիսի իրավագիրակցության ձեւավորումը, որի հիմքում պետք է ընկած լինեն սահմանադրական հիմնարար արժեքների ու սկզբունքների խոր, իմաստավորված ու միասնական ընկալումը, դրանց հետեւողական իրացումը:

Ինչպես նշել ենք, սահմանադրական մշակույթը շարունակական զարգացող երեւույթ է եւ իրավական, ժողովրդավարական պետության ու քաղաքացիական հասարակության պայմաններում ձեռք է բերում որակապես նոր բնույթ ու բովանդակություն: Վերջինս պայմանավորված է այդ հասարակության մեջ Սահմանադրության ունեցած դերով ու նշանակությամբ: Տասարակական հարաբերությունների սահմանադրականացումը ժողովրդավարական քաղաքակրթության կարեւոր ձեռքբերումներից է այն

առումով, որ նման հասարակությանը բնորոշ են անխպրականությունը, բազմակարծությունը, հանդուրժողականությունը, համերաշխությունը, հարգվում ու երաշխավորվում են մարդու իրավունքներն ու ազատությունները, հսկակեցվում ու հուսալի պաշտպանվում են իշխանության սահմանները, դիրքությունը է դատավոր արդարադարձությունը:

Նման հասարակության մեջ սահմանադրական մշակույթի հիմնական բնութագրիչներն են դառնում.

1. մարդու փեղն ու դերը հասարակական հարաբերություններում, նրա արժանապարփության ճանաչումն ու հարգումը, իրավունքների եւ ազափությունների երաշխավորումը՝ որպես բարձրագույն արժեք, որպես անմիջական գործող իրավունք,
 2. իրավունքով իշխանության սահմանափակումը,
 3. իշխանությունների գործառնության հավասարակշռումը,
 4. ժողովրդակիշխանության հասպարումը, իշխանությունների ընդունությունն ու վերահսկելիությունը,
 5. քաղաքական, քննիչական ու վարչական ուժի օպտիմալ ապակենարդունացումը, ազագի գործառնության ներաշխավորումը, գործառնական, կառուցակարգային, նյութական ու սոցիալական անկախությամբ օժիգած դադարական համակարգի առկայությունը: Սահմանադրականությունը գոյություն չի ունենա այնքան ժամանակ, քանի դեռ այն քվեագութիւնը մոդից չի գործադրութել դադարականի դահլիճ²⁴,
 6. ազգային իրավական համակարգի ներդաշնակությունը միջազգային իրավունքի նորմերին ու սկզբունքներին,
 7. պետական իշխանության սահմանադրական համակարգում **գործառույթ-ինսպիրութիւն** շղթայի դինամիկ ներդաշնակության երաշխավորումը,
 8. Սահմանադրության գերակայության ու կայունության ապահովումը:

Սահմանադրությունից՝ սահմանադրականության, ցանկալիից իրականին հասնելու ճանապարհն անցնում է հասարակական հարաբերությունների սահմանադրականագման միջով:

Սահմանադրական արդարադապության մարմինների համաշխարհային առաջին խորհրդաժողովը²⁵ առանձնահապուկ կարեւորեց այն խնդիրը, որ շար երկրներում սահմանադրականության հասքագործումը նկատելիորեն հետք է մնում սահմանադրական փաստաթղթային այն լուծումներից, որոնք՝ որպես իրավական մըքի ու մարդկային քաղաքակրթության ձեռքբերումներ, հաճախ ընդօրինակվելով, չեն դառնում փվյալ կոնկրետ հասարակության արժեքային համակարգի օրգանական բաղադրաբարրը։ Իսկ երկրորդ

²⁴ The Constitution in 2020. Edited by Jack M. Balkin, Reva B. Siegel, Oxford University press, 2009, p. 149.

²⁵ Տես Հայոց Հանրապետության 2009 թվականի օգոստոսի 22-25-ը Կեյպարան նույն հայոց Հանրապետության:

խորհրդաժողովի²⁶ հիմնական եզրահանգումը՝ արդի մարդարավերներին համարժեք սահմանադրական մշակույթի անհրաժեշտության փաստումը դարձավ:

Գլխավոր խնդիրը՝ մի շարք կոնկրետ հարցերի ճշգրիտ պարասխանը գրնելն է: Նախ. որո՞նք են նոր հազարամյակում մարդկությանը նեփած մարդարավերները, որոնք կարող են սահմանադրափրավական նորովի լուծումներ պահանջել: Երկրորդ՝ ի՞նչ առանձնահարկություններ ունեն այդ մարդարավերները վերափոխվող հասարակական համակարգերի համար և ինչպիսի յուրահարուկ լուծումներ են պահանջում: Երրորդ՝ որո՞նք են սահմանադրափրավական հետազա զարգացումների արժեհամակարգային հիմքերն ու հիմնական միտումները:

Միջազգային հանրային-իրավական զարգացումների դաշտերի ծալքերի համեմական վերլուծությունը, աշխարհում ընթացող համակարգային նոր կարակիզմները վկայում են, որ հիմնական գործոնները, որոնք բնորոշ են նոր հազարամյակի հասարակական կարգին են, մեր կարծիքով, թելադրում են նորովի լուծումներ, ամենալավագնությանուր գծերով հանգում են հետեւյալներին.

1. նախորդ դարավերքի հասարակական բացասական էներգիայի կուրակումներն ու համակարգային փլուզումներն առաջ են բերել հասարակական կեցության այնպիսի վիճակ, որին բնորոշ են անկայունությունը, անորոշությունը, արժեհամակարգային շփոթը, իռացիոնալի ու «միջակության» ակդիվացումը, ինչպես նաև հասարակական դարբնույթ գործընթացների աննախադեպ միջազգայնացումը,

2. դրամական, տեղեկադրական, իրավական գլոբալացումն ու սոցիալական հանրությանը վերաբերող շաբ արժեքների ունիվերսալացումը հասարակական ինվեգրման որակապես նոր իրավիճակ են սպեղծել, երբ կազմավորվում են նախադեպը չունեցող միջազգային համակցություններ և ներպետական գործընթացների վրա աննախադեպ է դառնում էկզոգեն գործոնների ազդեցությունը,

3. նոր իրականության բնորոշ առանձնահարկություններից է եւ այն, որ էապես խզվել են սահմանները ներպետական ժողովրդավարական համակարգերի եւ վերպետական դրամական հարաբերությունների միջեւ²⁷,

4. միջազգային առումով ժողովրդավարական զարգացումները, մի կողմից, պահանջում են գործակցության, իրավակարգի պաշտպանության, համակարգային ներդաշնակության ու կայունության նոր մակարդակ ու որակ, մյուս կողմից՝ առաջացել է լուրջ հա-

²⁶ Տեղի է ունեցել 2011 թ. հունվարի 16-18-ին Ռիո դե Ժանեյրոյում (Բրազիլիա):

²⁷ Ինչպես իրավացիորեն նշում է պրոֆեսոր Էրնսդ Ուլրիխ Փոն Վայցգեները, նման պայմաններում, երբ ժողովրդավարությունը ներփակվում է ազգային-պետական սահմաններում, իսկ դրամական հարաբերությունները վերպետական բնույթ ունեն, պեսք է խոսել ժողովրդավարության զարգացման նոր փուլ՝ համաշխարհային ժողովրդավարության անհրաժեշտության մասին (Deutschland, 2002, թիվ 4, օգոստոս-սեպտեմբեր):

կասություն ներպերական հարաբերություններում ժողովրդավարության արմադավորման եւ միջպերական հարաբերություններում ուժի թելադրանքի միջեւ՝²⁸,

5. նման իրավիճակում դժվարանում է նաև միջազգային ֆինանսավորեսական ճգնաժամերի հաղթահարումը, որը ներկայում համակարգային, խոր վերարդադրական ճգնաժամի բնույթ է սպացել, եւ դրա հաղթահարման ուղղությամբ արվող քայլերը դեռևս համարժեք չեն առկա մարդարավերներին,

6. որպես ընդհանուր միգրում՝ հասարակական հարաբերություններում թուլանում էր պետության կարգավորիչ դերը²⁹: Սակայն համաշխարհային ֆինանսական եւ գնութեական ճգնաժամը, որն ավելի խոր արժեհամակարգային բնույթ ունի, թելադրեց մոդելեցման նոր փիլիսոփայություն՝ էքսպրեմալ իրավիճակներում անհնարին է հասնել կայունության առանց պետության ակտիվ միջամտության,

7. քաղաքացիական հասարակության կայացումը եւ իրավական, ժողովրդավարական պետության սպեշալիտետը դարձել են համընդհանուր իրեալ: Առավել իրավապ է դառնում ունիվերսալիզմի եւ ազգային առանձնահարկությունների հաշրեցման խնդիրը: Միաժամանակ, ներդաշնակման փոխարեն էլ ավելի են սրվում արժեհամակարգային հակասություններն ազգակենքրոն եւ անձնակենքրոն պերական-հասարակական համակարգերում, իսկ «էթնոս» եւ «դեմոս» հասկացությունները սահմանադրափակական հարաբերություններում նորովի վերահմասպավորման խնդիր ունեն,

8. մարդկային հանրությունը, մի կողմից, հոգեւոր-մշակութային հանրությունից ասդիմանաբար դառնում է մերկանդիլ սպառող հանրություն, մյուս կողմից՝ կրոնը, հոգեւոր ոլորսը մարդուն ասրվածային արժեքներով ապրեցնելու էական դերակարգարությունից հեռանալով՝ վեր են ածվում ձեւական, մարդուն խորթացած ինքնամփոփ ներեկեղեցական երեւույթի: Բացի դրանից, ազաք շուկայի ծավալման եւ գնութեական գլոբալ մրցակցության պայմաններում բարոյական նորմերը կորցնում են հասարակական հարաբերությունների կարգավորչի ու խթանիչի իրենց նախկին դերը,

²⁸ Հարկանշական է 2003թ. ապրիլի 12-ին Սանկտ-Պետերբուրգում իրավիրված՝ «Խաղաղություն, անվտանգություն, միջազգային իրավունք, հայացք ապազային» թեմայով միջազգային կոնֆերանսում ֆրանսիայի Նախագահ Ժակ Շիրակի արդահայքած միջբն առ այն, որ «Միջազգային քաղաքականությունը, որը կառուցված է ժողովրդավարական արժեքների վրա, պերք է խարսխվի անվիճելի կուեկտիվ նորմերի վրա եւ, դրա հենք մենքեն, անհրաժեշտ է հիմնել միջազգային արդարադարձական համակարգ, որը կորչած կլինի այդ իրավական նորմերին լիակատար ուժ հաղորդել: Ոչ մի միջազգային կարգ, որը միջպատճեն է շարունակական հեռանկարին, չի կարող հիմնված լինել ուժի դրամաբանության վրա»: (Տե՛ս // Պրավութեան 2003, N 5, էջ 8):

²⁹ Դա վերաբերում է ինչպես գնորդեսական ոլորսին, նույնական հանրային կառավարման բազմաթիվ հարցերի: Ինչպես շեշտում է պրոֆ. Յու. Ա. Տիխոնմիրովը, հանրային իշխանության ժողովրդավարական հիմքերի ամրապնդումն ու հասարակական ինքնակատավարման գործուն համակարգի արմադավորումն անհրաժեշտ նախադրյալներ են սպեշալիտետ երկրի կառավարմանը քաղաքացիների մասնակցության իրավունքն առավել ամբողջական ու լիարժեք իրացնելու համար (պետք է Յ.Ա. Տիխոմիրով - Օ մօդերնիզացիոն հոգածք / / Ժурнал российского права. 2004, N 4, էջեր 3-16):

9. հարսպության եւ աղքադության մկրագրը հասել է բեւեռացման այնպիսի սահմանագծի, երբ դրանք պարզապես անհամարելին են դատնում³⁰: Համամարդկային չարիք են դարձել թմրամոլությունն ու ահարեկությունը: Վերջինիս աննախադեպ ծավալումն ունի դժբեսական, սոցիալական, քաղաքական դրդապարճառներ եւ հակադրվում է արժեքների այն համակարգին, որը ներկայում ընկած է քաղաքացիական համաձայնությամբ ժողովրդավարական հարաբերությունների հասպարման հիմքում³¹,

10. մարդու արժանապապվությունը, նրա իրավունքները դառնում են միջազգային իրավահարաբերությունների օբյեկտ: Մարդկությունը նոր հազարամյակ թեւակոխեց՝ «փշրելով» իրավունքի ընկալման ու դրա պաշտպանության ազգային կաղապարները, եւ մարդու իրավունքների պաշտպանության հարցը դարձավ վերպերական երեւույթ,

11. Էապես փոխավում են միջազգային իրավունքի դրեզն ու դերը միջազգային իրավական համակարգում: Միաժամանակ, ավանդական իրավական համակարգերի վարբերություններն առավել հարաբերական են դառնում: Եվրոպական մայրցամաքային իրավական համակարգում նախադեպը դառնում է իրավունքի կարևոր աղբյուր, իսկ մարդու իրավունքները, անկախ ազգային սահմաններից, միջազգային պաշտպանության օբյեկտ են դառնում: Նաճախ նաև փորձեր են արվում ժողովրդավարության «արգահաննան» ուղղությամբ՝ առանց բավարար չափով հաշվի առնելու դրա գոյության համար անհրաժեշտ կենսամիջավայրի սպեղծման կարեւորությունը,

12. սառը պարերազմի ավարտից հետո ու հերթամայնավարական գործադրում ժողովրդավարական զարգացումների պայմաններում փնտրվում են միջազգային հավասարակշռության նոր հենակետեր: Աշխարհը երկրեւեռ համակարգից դարձել է անկայուն միաբեւեռ համակարգ՝ բազմաբեւեռի վերաճելու իրական միգումներով: Մի կողմից, միջազգային համակարգային կայունության հենակետերը դեռեւս հարակեցման գործընթացում են, մյուս կողմից՝ գոյություն ունեցող եւ այդ նպավակին ծառայող միջազգային ինսպիրուվաները կորցնում են իրենց նախկին փեղն ու դերը,

13. համամարդկային գործակցության նոր խնդիրներ են ի հայր եկել: Մարդկությունը վաղուց սպեղծել է ինքնառչացման բավարար նախադրյալներ, եւ պարահա-

³⁰ Նորեյյան մրցանակի դաշտեկիր, ԱՄՆ-ի Նախագահի նախկին խորհրդական, դժբեսագեկ Ժողելք Սպիտիցը միանգամայն ճշնարդացի է՝ ընդհանրացնելով, որ նման բնեռացման պարմատը դժբեսական գործացման վեալ ընթացքը եւ ծայրահետացված լիբերալիզմն է: Մարդկության զարգացման նպարակը չէ հարաբությունը փոքրաթիվ անհաբների ձեռքին կուրպակելը՝ համարած աղքադրության պայմաններում: Յուրաքանչյուր դժբեսական ձեռնարկ պետք է գնահարվի նաև իր սոցիալական հերթական հետեւանքների փառանկությունը («Գլոբալացման սպլեռում», Deutschland, 2002, թիվ 4, օգոստոս-սեպտեմբեր):

³¹ Էապես արդարացիորեն նշել են Ֆրանկիսի սահմանադրական խորհրդի նախկին անդամ, պրոֆեսոր Ժակ Ռոբեր, Խոլանդիայի գերագույն դարպարանի անդամ Ֆրենսիս Սերֆին, Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի իրավական հարցերի եւ մարդու իրավունքների հանձնաժողովի անդամ Միշել Յունոն, Վասրբիայի գերագույն դարպարանի նախագահ Էվլին Ֆելցմանը եւ այլք՝ «Վեհական դեմ պայքարում նպարականարմարության շահերի եւ մարդու իրավունքների միջեւ հաշվեկշռի պահպանումը» վերբառությամբ իրենց երկրարևում՝ ներկայացված Ստրասբուրգում 2002 թ. մայիսին հրավիրված միջազգային դարպարան փասներորդ կոնֆերանսում, վերջին հաշվով, ահարեկության դեմ պայքարը հանգում է այն իդեալների հաղթանակի ապահովմանը, որոնք ընկած են ողջ հանրության սոցիալական համաձայնության հիմքում:

կանության գործոնը կամ բնական աղեփները կարող են այդ հավանական հնարավորությունը դարձնել իրական: Առավել քան իրադարձությունները նաև համամուրակային վիճակների դեմ գործակցաբար հանդես գալու անհրաժեշտությունը,

14. գիտաբեկնիկական մոդը թոփքը, գեղեկաբարվական ներկա հնարավորությունները, ընդհուած գեխնիկական կամ օրգանական արհեստական մարդու սգեղման փորձարկումները թելադրում են ընդհանուր արժեհամակարգային նոր մոդեցումներ:

Թվարկումների ցանկը կարելի է շարունակել, սակայն նշվածն է բավական է համոզվելու համար, որ այս համապեքսպում պետք է դիտարկվեն բոլոր այն հիմնահարցերը, որոնք ներազգային ու միջազգային հողովություն առնչվում են հասարակության կայուն ու ներդաշնակ զարգացման խնդիրներին³²: Միաժամանակ, անհրաժեշտ է շեշտել, որ նշված երեսույթները նոր չեն ու մեկեն չհայտնվեցին: «Պարզապես դրանք ծավալվելով՝ նոր որակ ու ազդեցության բնույթ են ձեռք բերել՝ դրանից բխող հետեւանքներով»:

Նոր հազարամյակում սահմանադրականությանն սպառնացող վիճակների վերլուծության առումով, մեր կարծիքով, ուշադրության արժանի են նաև ՌԴ ՍԴ նախագահ, պրոֆեսոր Վ. Զորկինի ընդհանրացումները, համաձայն որոնց՝ նա այդ սպառնալիքների շարքում, մասնավորապես, առանձնացնում է³³.

1. աշխարհակարգի Վեսփալյան համակարգի վրա հարձակումները³⁴ եւ ցանցային կառավարման սկզբունքների արմադրավորումը գլոբալ խնդիրների լուծման գործում,

2. նոր մարդարավերների ու վիճակների պայմաններում՝ դրանց դեմ պայքարի համապեքսպում մարդու սահմանադրական իրավունքների նկարմամբ ովնագությունները, այդ իրավունքների ուրիշականացումը «օրինականացումը»՝ ահաբեկչության դեմ պայքարի շրջանակներում,

3. երրորդ սպառնալիքը կապված է «սոցիալական պետության» սահմանադրական սկզբունքի իրացման հիմնահարցի հետ³⁵,

³² Ի դեպ, միջազգային պրակտիկայում հաճախ են հանդիպում արդարացի քննադապություններ այն առնչությամբ, որ պարագան զարգացումների ներքին դրամաբանությունը, նոր իրողությունները, հազարամյակի մարդարավերներն անհրաժեշտ ու բավարար խորությամբ չեն ուսումնասիրվում ու հաշվի առնվում: Դրանք ավելի շատ դարձել են մակերեսային շահարկումների կամ քաղաքական սակարկությունների առարկա: Մասնավորապես վեն Brands M. The Obsolescence of Almost All Theories Concerning International Relations // European Review. 1998. 6(3).

³³ В. Зорькин – Роль Конституционного суда в обеспечении стабильности и развития Конституции // Конституционное правосудие, 2004, N2, էջեր 15-28, ինչպես նաև՝ Зорькин В.Д. - Об угрозах конституционному строю в XXI веке и необходимости проведения правовой реформы в России // Журнал российского права, 2004, N6, էջեր 3-17:

³⁴ Խոսքը Վերաբերում է 1648թ. սպորագնավաճ Վեսփալյան համաձայնագրերին, որոնք հանդիսացան այն քաղաքական ու իրավական հիմքը, համաձայն որի պետությունն է սոցիալական հանրության կազմակերպման ու միջազգային հարաբերությունների հիմնական ինսպիրութը, իսկ այդ համակարգի հիմքը պետության ինքնիշխանության սկզբունքն է:

4. Հորրորդ սպառնալիքը պայմանավորված է իրավական բարեփոխումների դանդաղ ընթացքի կամ դրանց բացակայության հետ, որը հավկապես վերաբերում է անցումային համակարգերին:

Նեղինակի այս դիբարկումները փիպական են վերափոխվող երկրների համար եւ առավել հետաքրքրություն են ներկայացնում այս երկրների միջազգային ինֆեկրման դրեանների մասին: Միաժամանակ, վերջին դասնայակներում միջազգայնացման նոր երեւոյթներն առավել ակտիվ դրսեւորվեցին հագլաւագես Եվրոպայում, որտեղ միասնական շահերի վրա խարսխված դնդանական, քաղաքական, հումանիփար եւ, ընդհանուրապես, արժեհամակարգային համագործակցությունը բերեց վերպետական գործակցության այնպիսի որակի, երբ սպեշալիզացիա միասնական դնդանական, իրավական, կառուցակարգային բազան միանգամայն օրինաչափորեն օրակարգային է դարձնում նաև վերպետական Սահմանադրության սպեշալիզացման անհրաժեշտությունը: Սա արդեն իրավական գլոբալացման բոլորովին նոր որակ է, առայժմ բնորոշ միայն Եվրամիությանը: Վյուհանդերձ, **վերպետական իրավակարգը՝** իր բնորոշ գծերով ու ակտիվ ներազդեցության լիցքով, զնալով դիրապելող է դաշնում ողջ աշխարհում:

Հասարակական հարաբերությունների սահմանադրականացման հիմնական դժվարություններից մեկն այն է, որ առաջանում է որոշակի հակամարդություն ընթացիկ եւ մնայուն քաղաքական շահերի ու կողմնորոշումների միջև։ Որպես դրա հեգելանք՝ դարակերպ են ընկալվում, մեկնաբանվում եւ իրացվում հիմնարար սահմանադրական արժեքները։ Հագեցապես, այսպես կոչված, մոդելային սահմանադրական դոկտրինաների պայմաններում, սահմանադրական դրույթների մեկնաբանումը գլխավորապես ընթացիկ քաղաքական առաջնահերթությունների հարթությունում հանգեցնում է նրան, որ անջր-պես է առաջանում սահմանադրական արժեքանության եւ հանրային կյանքում դրա իրական դրսեւորման միջև։

«Եսփետությունն այն է, որ քաղաքականության եւ սահմանադրականության հիմնահարցը պեսք է քննարկման առարկա դատնա ոչ թե այդ երկու երեւությների մեկուսի, մեխանիկական համադրման հարթությունում, այլ հսկակ պագճառահեթենանքային կապի մեջ: Իրավական, ժողովրդավարական պետությունում քաղաքականությունն ինքը պեսք է լինի սահմանադրական, բյու կենսագոյի այն հիմնարար արժեքներից ու սկզբունքներից, որոնք հասարակական համաձայնությամբ դարձել են Վարքագծի հիմնարար կանոն: Քաղաքականությունը միջոց ու հնարավորություն է հանրությանը կողմնորոշելու արժեհամակարգային բնորություն կապարելու մեջ: Վյն կապարելուց հետո

³⁵ Κτητηνικαὶροι ὑπαρχῇ πινθὶς ἡ αὐτοτελεία τοῦ θεοῦ μέσος απογῆτας καὶ οὐδὲν πρότερον τοῦ θεοῦ αποτελεῖται, οὐδὲν διαφέρει απὸ τοῦ θεοῦ αὐτοτελείας. Οὐδὲν γάρ τι τοῦ θεοῦ αποτελεῖται πρότερον τοῦ θεοῦ αὐτοτελείας, οὐδὲν διαφέρει απὸ τοῦ θεοῦ αὐτοτελείας. Οὐδὲν γάρ τι τοῦ θεοῦ αποτελεῖται πρότερον τοῦ θεοῦ αὐτοτελείας, οὐδὲν διαφέρει απὸ τοῦ θεοῦ αὐτοτελείας. Οὐδὲν γάρ τι τοῦ θεοῦ αποτελεῖται πρότερον τοῦ θεοῦ αὐτοτελείας, οὐδὲν διαφέρει απὸ τοῦ θεοῦ αὐτοτελείας.

քաղաքականությունն սպանում է իր բնական սահմանափակման սահմանները՝ դրսեւոր-վելու միայն ու միայն սահմանադրական ժողովրդավարության շրջագծում:

Սահմանադրությունը պետք է ընկալվի ընթացիկ քաղաքականությունից անկախ: Սահմանադրության մնայուն ուժը պայմանավորված է դրա նկարմամբ հասարակության վերաբերմունքով եւ, որպես օրենք, դրա լեզվիմությամբ ասդիմանով³⁶: Սահմանադրության հեղինակությունն է սահմանադրականացման երաշխիքը: **Իսկ ներկա հազարամյակի իրողությունների պայմաններում հասարակական կայունության գլխավոր երաշխիքը սահմանադրականության հասդարակումն է:**

³⁶ The Constitution in 2020. Edited by Jack M. Balkin, Reva B. Siegel, Oxford University press, 2009, p. 25-26.